

Հմբ.  
 Ընծայեց յօգուտ շինութեան աղիւս  
 և եղէկ հինգ մանէթի. . . . . 5  
 5 Ի կտակաւանդութենէ հանդուցեալ  
 Սուսան Սարգեանի ստացաւ ձե-  
 ոամբ բարեպաշտ եղբորորդոց իւ-  
 րոյ Ստեփանայ Բաղդասարեան 50  
 6 Պ. Մէհրապ Օրտուխանեան 5  
 7 Միթիթար Տէր Ստեփաննոսեանց 3  
 8 Աղաղիւլ Աւետեան Շիրաքեանց 3  
 9 Յովհաննէս Մարգար. Բեկայեանց 2  
 10 Յովաննէս Պետր. Գուլգարեանց 2  
 11 Մնացական Մ. Ա. Ծաղղեանց 1  
 12 Ստեփան Մելքումեան . . . . . 1  
 13 Բաղալ Այլանջայեան . . . . . 1  
 14 Բաղալ Գօլուեան Կրատեանց 1  
 15 Ահարօն Շահպաղեան . . . . . 1  
 16 Ղուդի պրի կին Գիւլջանեանց 2  
 17 Բանաւուչ և Խանում Ստեփանեան 1  
 18 Ղզան Խանամիրեան . . . . . 1  
 19 Մահտ. Նաղլու Տէր Ստեփանեանց 1  
 20 Շահնարաթ Տէր Օհանեան . . . . . 1  
 21 Նուէրք անյայտ ևս . . . . . 4  
 Մահտեսի Ստեփան Օհանեան նո-  
 ւիրեց 2 փայտ՝ հաշուելով զրամ 4  
 Ներկայ 1870 ամի անցեալ նոյեմ.  
 ամսուց սկսուած սահմանեցաւ կարգ  
 մեր օրինակատար քահանայից մէջ  
 ի դէպս օրինակատարութեան ան-  
 շուշտ հետևողութեամբ ըստ չափու-  
 կարողութեան մեր ժողովրդոց ստա-  
 նալ յօգուտ ևս Գպրոցին։  
 22 Մկրտութիւններից, ննջեցելոց և  
 Պսակատէրներից մի ամսուայ մի-  
 ջրոցին զոյացաւ նուէրք . . . . . 1 30  
 Ընդ ամենի գումարն լինումէ 139 62<sup>1</sup>/<sub>2</sub>

Յոյսով բարեւոյ ծախսոց է վերայ նոյն Գպրոցին  
 թոյնս Բեռլինայ

Արժանի  
 Տն. Կոյ.

Հմբ.  
 1 Բոլոր շինութեան մասին, թէ նիւ-  
 թերի և թէ վարպետների և մը-  
 շակների՝ ընդ ամենն . . . . . 74 35<sup>1</sup>/<sub>2</sub>

Հմբ.  
 2 Զորս հատ զրասեղան շինելու տախ-  
 տակների՝ փայտերի՝ բւետների և  
 վարպետների, ևս մի հատ դուան  
 գին տուաւ ընդ ամենն . . . . . 34 35  
 3 Մի հատ զրատախտակի . . . . . 2 50  
 4 Պատուհանի՝ շուշէքի և կաւճի 4 65  
 5 Մի հատ հնոցի շինութեան իւր  
 պարագայիքն ընդ ամենն . . . . . 13 35  
 Բոլոր ծախուց գումարն եղև 129 20<sup>1</sup>/<sub>2</sub>  
 Ծախքն մուտքից իրաց բար-  
 ձաւ և մնաց ձեռաց 10 42

(12. և 13. Թոյնքէն ճանարդք։)

Ինաստ ինաս (յամառութիւն) է, անունս քօռ  
 (կոյր) Մուրատ է։  
 Ինձ տես, քեզ ողորմիր։  
 Իմ տանս ծառայն եմ, ուրիշի աղայն։  
 Ինձ չէ հաւատում, իշին է հաւատում։  
 Ինը չտուած՝ տասը ձեռք չի՝ ընկնիր։  
 Ինչ եմ անում աշխարհի հարստութիւնը, երբ  
 կոշիկս նեղ է ոտքիս։  
 Ի՞նչ տամ, որ մի բարի խօսիս։  
 Ինչ տեղ փորդ չի կշտանալ, անօթութիւնդ մի՛  
 յայտնել։  
 Ի՞նչ ես անում՝ զործը զործիցն անց է կացել։  
 Ինչ տալիս ես ձեռքով, նա գալիս է քեզ հետ։  
 Ինքնիրան վայր ընկնողը չի լաց լինում։  
 Իշին ասեն աչքալոյս՝ քեզ քուտիկ է եղել. ա-  
 սաց՝ խոտը առջևիցս պետք է առնէ՝ և ոչ բւ-  
 ոը շաղակիցս։  
 Իրա յարգը չիմացողը՝ պլոց յարգը ի՞նչ կիմա-  
 նայ։  
 Իրան գլուխը չի կարում կապել, կերթայ հարս-  
 նետունը հարսի գլուխը կապելու։  
 Լուի համար կարպետն ես վառում։  
 Խաբվանք դէմուրջիմ (երկաթագործ) սիրեցիկը,  
 օխտը տարի մուր շոնցիկը։  
 Խաշինն ասաց տակս ոսկի է, շերեփն ասաց ես  
 ուսկից կուգամ։  
 Խեղքը հաստիւմը չէ՝ դիտումն է։

Խաղիւր (Հասարակութիւնը) զիտեն ես ուզ եմ, դու՞նք  
Խէրը (բարին) խիար (վարունգ) է դառել, արիւն-  
նը ջուր:

Խենդը խենդին տեսնելիս՝ դա կլինուլը պահումէ:  
Խլի կանակին տուին, ասաց՝ այս ի՞նչ զմբարտոց է:  
Խրատ ունիս գլխիդ տուր:

Խօսքը խօսք կրանայ:  
Խօսքը Հասարակաց է, մանաւանդ՝ առնողներ:

Խօսքը մեծինն է, ջուրը փոքրինը:  
Ծանր կնից՝ լիտր դաս:

Ծատուրը խաղին կարօտ չէ:  
Ծառ լինի որ քամի չի դիպչի:

Ծեծը դրախտիցն է դուրս եկել:  
Ծովն ընկել՝ ձեռքը քցումէ փրփրին:

Ծուլութիւնը գովաթի (Հարստութեան) փեսա է:  
Կաթի ճետ ներս մտած ընտրութիւնը՝ հօգուց ճետ  
դուրս կգայ:

Կալը կուտը՝ մեր մամի հարսանիքը:  
Կաթողիկէս մեծ, զօրութիւնը սակաւ:

Կաղ իշով քարվան (կարաւան) ես խառնելում:  
Կան նստել, մոտաւորկան է հաշում:

Կամ աղն է պակաս՝ կամ մաղը:  
Կասես կասես չես գար:

Կարմնջից անցել իրար են դիպել:  
Կնից ոտքիս տեղ անեմ, տես գլխիդ ի՞նչ կանեմ:

Կոյրը ինչպէս նայում է Աստուծոյն, այնպէս էլ  
Աստուած նայում է կուրին:

Կոյրը չէ տեսնում, զգում է:  
Կոյրը շրջին մահանայ (պատճառ) է դնում:

Կովը մեռաւ, խաչը վերցաւ:  
Կովի աղբը սուաղ (ծեփ) չի բռնում:

Կուտը մեր տունն է ուտում, հաւկիթը գոռնե-  
րումն ածում:

Կուրօրէն Աստուծոյ ճամբէն:  
Կուտես ու կուրանաս:

Կուռի օրը կուռ պէտք է, հաշտութեան օրը հաշ-  
տութիւն:

Կերանք կշտացանք բանւորով աշկերտով:  
Հաղար խօսողը կասեն մեռել է:

Հասակդ էր՝ հասաւ, միբուքդ էր՝ բուսաւ:  
Հարիւր կնիկ մօտ լինի, ցաւը ծննդականինն է:

Հարսը իշին է նստել՝ քաւորի գոնիցը չէ անց-  
կացել:

Հարստի հարստութեանը չես կարող հասնիլ, զը-  
րացի եղիւր նրան

Հացը դրած. բանն անիծած:  
Հաւաս (իդձ, եռանդ) էլ ունիս:

Հեռի տեղի հացը մեծ կթուին:  
Հէնքի մէջը շուն ընկաւ:

Հէրուայ տօնը շնորհաւոր:  
Հին բարեկամը թշնամի չի լինիլ:

Հիւանդը որ ողջանալու լինի, բժիշկը դէմ կգայ:  
Հիւրը հիւրին չէ ուզում, տանուտէրը ոչ մե-

կին:  
Հոգի ես էլի՛:

Հողը խարար (լուր) չտանի:  
Հօրս անունը ինձ ծախում է:

Չայնը տակը, քարը վրէն:  
Չեքքը գործումն է, աչքը խաղումը:

Չեռքիցը եկաւ՝ չարաւ:  
Չէթը չվազած՝ քարն է դէմ տալում:

Չին էլ նրան է սազում (կը վայելէ), սիլահճն  
(ղէնք) էլ:

Չին կխաղայ՝ մարդին են գովում, սուրը կըկտրէ՝  
բազուկն են գովում:

Չիու վերայ նստելիս Աստուածն է մոռանում, իջ-  
նելիս՝ ձին:

Չուկը ծովումը կմեծանայ:  
Պազարը գիտէ իրան բազարը (տուտուր):

Պաղը (սագ) զազի հետ, քաչաղ (գոնջ) հաւն էլ  
չիլ (պիտակ) խօրօզի (ազոր) հետ:

Պալուն (սեխ) չէր, որ հոտ անէի:  
Ճանճը ոչինչ է, բայց սիրտ է պղտորում:

Ճանճն ի՞նչ է, որ ճենճն ի՞նչ լինի:  
Ճարտար գողը տանուտիրոջն է բռնում:

Մազումը եթէ զօրութիւն լինի՝ այժը մարգարէ  
կլինի:

Մախազ եմ, ու եսխազ եմ:  
Մահը մէկ օր, լացը մէկ օր:

Մարդը լաւ օրի չի դիմանալ:  
Մարդը մարդի մօտ ուղարկեցին, ինձ էլ քեզ մօտ:

Մարդը չանդամացած, չարութիւնը իրան չի մօ-  
տանալ:

Մարդի հետ կուռելիս՝ յետքի խօսքը առաջ մի՛  
ասիլ:

Մարդի փորին ծեծեցին, գոաց՝ վա՛յ կանակաւ:

Մարդ կայ՝ որ մարդիցը լաւ է. մարդ կայ՝ որ է-  
չը նրանից լաւ. մարդ կայ՝ որ խօսացնես՝  
քաղցր կլես. մարդ կայ՝ որ չխօսացնես՝ շատ  
լաւ է:

Մարդն ի հալաւ, էչն ի փալան (համաւ):

Մեղաց մեծ խօսածիտ:

Մեր մեղքը մեղի հետ է:

Մեռելները գիտեն՝ թէ սաղերը (կենդանիք) ամեն  
օր դաժաց են ուտում:

Մեր սպասը՝ ձեր հէջիցը (ոչինչ) վատ է:

Մէկ մանկութիւնում՝ մէկ ծերութիւնում:

Մէկ Աստուած, անթիւ ստեղծուած:

Մէկ չէն՝ հաղար փորձանքից է ազատել:

Մէկ աչքը մէկ դիտին բաւական է. երկուսը չը-  
նորհքի համար է:

Մէկ ձեռքով երկու ձմերուկ չի բռնում:

Մեղաւորի մեղքիցը տրամի արդար:

Մի ասեղ է առնելու, երկաթի փութն է հարց-  
նում:

Մի անցնիր մուխանաթ (նենգաւոր) մարդի կարմնջից,  
թող քեզ տանի հեղեղը. մի՛ պառկիր աղուէսի  
հոփանիքում, թող պատառէ քեզ առիծը:

Մին դժալ ջրի վարձքը կայ:

Մինը միսին տուն չէ թողել, նա ասել է սիլ-  
լահներս ո՞րտից կախեմ:

Մինը չմեռած՝ միւսն յառաջ չի գալ:

Մինչև առուն ջուր գայ, գորտի աչքերը դուրս  
կգայ:

Միրութ չունեմ՝ որ խօսքս անց կենայ:

Միսն առանց ոսկորի չի լինիլ:

Մի սատակիր իմ էշս, դարուն է բացվում՝ եօն-  
ճէն (խոտ) է ծրում:

Մկնտանձի (զինեպան) Չարէ ջուր կխառնէ, պա-  
կաս կծախէ միասին կքցէ (խմէ):

Մուկը կատուի համար միշտ վատ երազներ է  
տեսնում:

Մսագործի կամքը որ լինի՝ զապուն (նիհար) էծիցն  
էլ եղ է հանում:

Մօրս թընտիրը՝ մօրս ապուրը, նստեմ վերելը  
ուտեմ լաւաչը:

Յաջողութիւնը և ձախողութիւնը եղայր են:

Յառաջ դուխը, յետոյ ոտքը:

Յախտեան կնց, յախտեան ուտիր:

Յիմարների ձեռքերից՝ բուերը անապատումն են  
բնակում:

Ներսը ինձ է վառում, դուրսը ուրիշներին

Շանը կաղութիւնը մինչև աղուէսի տեսութիւնն է:

Շանը յիմարը նա է, որ փախաւիցը (խմորե-  
ղէն) բաժին է սպասում:

Շանը սատկելը չկայ, վատ մարդին մեռնելը:

Շատ գիտցողը շատ կսխալի:

Շանը սիրուն (հոտը, խումբը) չի՛ լինիլ:

Շան ոտքը քարվանիցը ինայնուստ:

Շատ աշխատեղն անօրուտ է, տուրքը Աստուծու-  
ցը պէտք է:

Շունը շան միսը չի՛ ուտիլ:

Շունը տաշտը մի՛ կապիլ:

Ողջերը քանի կան, մեռելներին բաժին չկայ:

Ողջ լինի պարտքնտէրը, ոչ կուտայ ոչ կուրանայ:

Ո՛րք չյաղթած քարը մի՛ վերցնիր:

Ո՛չ ես քօռ ասեմ, ոչ դուն ինձ քաշալ:

Ոչ եկեսցէ ոչ մեկնեսցէ, այլ զառկեսցէ շնթրո-  
կեսցէ, մինչև արեն ծագեսցէ:

Ոչ սապապն (առիթ) եմ, ոչ քեապապը (խո-  
րոված միս):

Ոչ սատանայն տես, ոչ աղօթք կարդայ:

Ո՛վ մեղ չար, Աստուած նրան բարի:

Ով գիտէ թէ, ո՞վ է աշխատում, ո՞վ է ուտում:

Ով շատ կերաւ՝ ողորմի հօրը:

Ով տեսաւ, չհաւնաւ:

Որբին հաց տուող չի լինիլ, խրատ տուող շատ  
կլինի:

Որը նախն (լուսնաձև երկաթ ի սմբակս գրաս-  
տուց), որը մխին:

Որտեղ երկու շուն լծեն, դուն սէլապան պէտք  
է լինիս:

Ով կերաւ եղն ու ձմուռը, ով զարկեց դուխը  
դուռը:

Որ կծախէ՝ տար ծախէ:

Ուղիղ հաւատքը յայտնի պէտք է:

Ուղիղ ճանապարհով գնացողը չի՛ դադրում:

Ում սայլին նստիս՝ նրա հօռօվէչն ես ասում:

Ունիմ՝ Աստուած՝ չունիմ՝ դարտ (հոգս, ցաւ):

Ունքը դնելու տեղ՝ աչքը հանեցիր:

Ուչ եկաւ, շուտ յառաջեց:

Ուտես չուտես, կազբարդ (բաժին) էլ է

Աւրախու թնկից յմազն և երկենանում, տրամու-  
 թնկից՝ եղունգը:  
 2 Հաւանածդ քարը աչք կհանէ:  
 2 Ղարնեկդ ընդուր է յայտնի, որ քարի մեծին ես  
 վաղում:  
 2 Փորձած ձիու ետևիցը մի անցնիլ:  
 Պատիցը ընկնողը, պատիցը ընկնողի հայիցը (որ-  
 պիտու թիւն) կհասկանայ:  
 Պահէ դարմանը, կդայ ժամանակը:  
 Պառկած շանը քար մի՛ քցիր:  
 Պարապ մնալուցը դատարկ աշխատիլը լաւ է:  
 Պարտքը հազարին հասաւ, հաւի միս է ուտելու:  
 Պարտք չունիս՝ գնա՛ երաշխաւոր եղիր. գործ չու-  
 նիս՝ վկայ եղիր:  
 Զաղացպանը ալիբոտ կլինի:  
 Զուրը գնում է, աւազն է մնում:  
 Զրի շատ դալը կտրելու նշան է:  
 Սատկած կովը կաթնոտ կլինի:  
 Սատանի իսկ իրայ տունն է՝ մտնի էլ դուրս էլ դայ:  
 Սար ու ձոր նորա համար մէկ է:  
 Սէյր անօղին (դիտող) դիւրին կթուի:  
 Սիւմ սիւմ սիւման:  
 Սոխ չեմ կերել, որ սիրտս կսկծէ:  
 Սովածին խղճմտանք չի լինիլ:  
 Սուրբ Աստուած չէ երեք անգամ կրկնեմ:  
 Ստախօսի շահն այն է, որ ուղիղ էլ ասէ չնն  
 հաւատում:  
 Սրտի սիրածը գեղեցիկ է աշխարհքումը:  
 Սե ձու թըր կասնն գեղ է, որին կօղնէ՝ որին չի  
 օղնում:  
 Վաղ վերկենողի զսմթը (բաղդ) երկու է, ու շ  
 վերկենողինը մէկ:  
 Վաճառականը որ կտոր ընկնի, հին գաւտարներն  
 (տետրակ, մատան) է բրբրում:  
 Վատ լեզուն անկիցը սուր է:  
 Վատ խօսքը՝ չանցկացած փողը՝ իրանց տիրոջն են:  
 Վատ տղայն գետնիցը ցախ է ժողվում, այլոց  
 օջաղն (կրակատան) է վառում:  
 Վարձ չի ստանար, պարապ էլ չի մնար:  
 Վերի արտի ցոր՞ն ես:  
 Տարի կայ՝ աւուրն է պահում, օր կայ տարվանը:  
 Տունը չկայ թանաջուր, ինքը կգնայ աքեարուռ  
 (գոռոց):

Տեսաւ՝ հանակ, շտեսաւ՝ գեօրչակ (գուցէ իրաւ.)  
 Տօն չէ զատիկ չէ, իսկն հագրեւ է շար—չապիկ:  
 Տիրոջը փողն է գնում, ծառայի հողին է դուրս  
 դալում:  
 Տօնօն ո՞վ՝ ձին ուլ, գայլը ո՞վ՝ թէխմակը (պար-  
 զալ) ո՞վ:  
 Տղամարդ եղի՛ր՝ դու իս պատուիր:  
 Տունը թէկ վառուաւ, մկներին էլ չմնաց:  
 Յաւը քաշողը դիտէ:  
 Իւրաքանչիւր մնաւը իրատ է մարդոյ, ո՛չ դասն  
 պակասում՝ ո՛չ խրատը:  
 Փախած ձուկը մեծ կլինի:  
 Փախիր՝ որ պրծնես:  
 Փարէմ (մի ստակ) տուինք խօսեցուցինք, երկու  
 կուտանք ձէնը չի՛ կտրիր  
 Փնտած չգտածդ էր:  
 Փնտէ, որ գտնես:  
 Փողը գնաց, բայց մաշն (ապրանք) էլ մալ եղաւ:  
 Փողը ձայն կտայ:  
 Փողը չհատաւ, հաճու (մահտեսի) ճամբէն չբրո-  
 նուաւ:  
 Քամին ապառաժիցն ի՞նչ կտանի:  
 Քանին քամին տարել է:  
 Քեռեկինն ասաւ, որդի՛ գտակդ ինչո՞ւ է ծակ. պա-  
 տասխանեց՝ դրուտ (ուղիղ) խօսալուցն է:  
 Քիչ էի՞ ք, դա էլ եկաւ աւելի:  
 Քիչ էին մտել գոնից, մէկն էլ ընկաւ երթըքից:  
 Քունը անուշ է:  
 Քառասուն գողը մի մերկին չեն կարացել կողոպտել:  
 Քեաստանիցն (չազանակ, շապալուտ) է եղիլ՝ կե-  
 ղեին է մհանայ գնում:  
 Օչ ուլ (ոչ որ) թ՛րղ չպարծենայ:  
 Օրը գայ՝ բարին հետը:  
 Օր է՝ կանցնի:  
 Օր լինի՛ որ մեր փողոցումն էլ տօն լինի:  
 Եւրոպայի անուշ երկրացիները

Գ Ի Ի Մ Բ Ի

Խեղճագրո-լեւան Արարատ Ամառոց  
 Ալեքսանդրապօլ քաղաքը սրանից 40 տարի  
 յառաջ գիւղ եղած է "Գիւմրի"\*) անուամբ, ունե-  
 (\*) Գիւմրի բառը կրճատուած է Գումարի բա-  
 ւուից, որովհետեւ սա եղած է գօրոց գումարման